ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ-15/03

ք. Երևան <<23>> մարտի 2015թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վահան Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Սեվ ընդ Էռ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին մատակարարել սույն պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **Կենցաղային և հանրային սննդի նյութեր** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին՝ նրա կողմից նշված հասցեով :

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն **իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **454 000 (Չորս հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման

ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**<< Սեվ ընդ Էռ>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3 h/h **900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի** ***<u>գործառնական վարչություն</u>*** *hվhh* ***02565827***	Հասցե՝ ք. Երևան, Նարեկացի 44 h/h ***1604[illegible]700 <<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ՓԲԸ*** *hվhh* ***00881827***
________ [illegible]	________ [illegible]

Հավելված N 1
<<23>> <<մարտի >> 2015թ. կնքված
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ-15/03 *ծածկագրով գնման պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Ապրանքի անվանումը՝ **Կենցաղային և հանրային սննդի նյութեր**

Չափաբաժին h/h	Գնման առարկայի անվանումը	Չափի միավորը	Գնման առարկայի բնութագիրը
u		1	2
1	Թղթե անձեռոցիկներ, երկշերտ	հատ	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":
2	օճառ, հեղուկ	լիտր	Որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 78 գ, սոդայանյութերի զանգվածային մասը (վերահաշվարկված ըստ Na2O)՝ 0,2-ից ոչ ավելի, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ 36-41 0C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, փրփուրի նախնական ծավալը՝ 350 սմ3-ից ոչ պակաս, անվտանգությունը՝ Սան Պին 1.2.681-97:
3	Էլեկտրական երկարացման լար	հատ	Չափսը՝ 3տ 5 մ կամ 3տ 10 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով: Անվտանգությունն՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":
4	Եռաբաշխիչ,վարդակին միացվող, առանց լարի	հատ	Նախատեսված (220-250) Վ հոսանքի լարման , մինչև 6 Ա հզորության:

5	Ցերեկային լամպ 120 սմ	հատ	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U- ձև, G-13 տիպի լամպակոթով, 20, 25, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 120 սմ՝: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":
6	Ցերեկային լամպ 60սմ	հատ	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U- ձև, G-13 տիպի լամպակոթով, 20, 25, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 120 սմ՝: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":
7	Մեկուսիչ ժապավեն, օղակաձև	հատ	Հոսանքի մեկուսացման համար տարբեր երկարության և լայնության գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի:
8	Փոշու հավաքման կտորներ	հատ	Բամբակյա, 40x40սմ չափի կամ համարժեքը, ըստ ԳՕՍՏ 11027-80:
9	Կողպեքներ	հատ	Կողպեք ներդրովի, 2 լեզվակով նախատեսված եվրոդռան համար:
10	Կողպեքների մասեր	հատ	Կողպեքի համապատասխան համալրող մաս՝ 8 կամ 9 սմ երկարության:ընդհանուր տեխնիկական պայմանները՝ ըստ ԳՕՍՏ 538-2001, ԳՕՍՏ 5085-2003 կամ համարժեքը:
11	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	հատ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:
12	Թեյի պատրաստման էլեկտրական սարքեր	հատ	Իրանի նյութը՝ մետաղ, գույնը՝ մետալիկ, ծավալը՝ 1.5-2.0 լիտր տարողությամբ, տաքացուցիչի տեսակը՝ փակ, ջրի մակարդակի ցուցիչով, միացման ցուցիչով, 220 վոլտ հզորությամբ աշխատող և անվտանգության համակարգով:
13	Էլեկտրական սրճեփներ	հատ	Իրանի նյութը մետաղ, էբոնիտե բռնակով, ծավալը՝ 0.3 լիտր տարողությամբ, 220 վոլտ հզորությամբ աշխատող:
14	Բաժակներ	հատ	Հյութի, սպիտակ թափանցիկ ապակուց, ձևը կլորավուն, ըստ ԳՕՍՏ 30407-96 կամ

			համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 25-ի N 1282-Ն որոշմամբ հաստատված "Սննդամթերքի հետ շփվող նյութերին և դրանց հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջների"տեխնիկական կանոնակարգի:
15	Թեյի կամ սուրճի փոքր բաժակներ	հատ	Սուրճի բաժակ՝ ափսեյով, սպիտակ, ձևը կլորավուն, ըստ ԳՕՍՏ 28390-89 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 16-ի N 1750-Ն որոշմամբ հաստատված "Խեցեգործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի" :

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
h/h **900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի**
գործառնական վարչություն
հվհհ ***02565827***

______ **[illegible]ատրյան**

ՎԱՃԱՌՈՂ

<< Սեվ ընդ Էռ>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Նարեկացի 44
h/h ***1604205[illegible]00 <<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ՓԲԸ***
հվհհ ***00881827***

______ **[illegible]յան**

Հավելված N 2
<< >> <<մարտի >> 2015 թ. կնքված
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ-15/03 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Ապրանքի անվանումը՝ **Կենցաղային և հանրային սննդի նյութեր**

հազ. դրամ

Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015թ.								Ընդամենը	
Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
			քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Թղթե անձեռոցիկներ, երկշերտ	հատ	0.100	0	0	0	0	369	36.9	0	0	369	36.90
օճառ, հեղուկ	լիտր	0.320	0	0	10	3.20	15	4.8	0	0	25	8.00
Էլեկտրական երկարացման լար	հատ	1.600	0	0	13	20.80	0	0	0	0	13	20.80
Եռաբաշխիչ,վարդակին միացվող, առանց լարի	հատ	0.250	0	0	32	8.0	0	0	0	0	32	8.00
Ցերեկային լամպ 120 սմ	հատ	0.500	0	0	0	0	70	35.0	0	0	70	35.00
Ցերեկային լամպ 60սմ	հատ	0.400	0	0	0	0	0	0	50	20.0	50	20.00
Մեկուսիչ ժապավեն, օղակաձև	հատ	0.150	0	0	0	0	12	1.80	0	0	12	1.80
Փոշու հավաքման կտորներ	հատ	0.280	0	0	0	0	0	0	75	21.00	75	21.00
Կողպեքներ	հատ	4.550	0	0	10	45.50	0	0	0	0	10	45.50
Կողպեքների մասեր	հատ	1.200	0	0	10	12.00	30	36.0	0	0	40	48.00
էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	հատ	0.100	0	0	0	0	0	0	144	14.40	144	14.40
Թեյի պատրաստման էլեկտրական սարքեր	հատ	7.000	0	0	8	56.0	0	0	8	56.0	16	112.00
Էլեկտրական սրճեփներ	հատ	3.50	0	0	10	35.0	0	0	10	35.0	20	70.00
Բաժակներ	հատ	0.300	0	0	0	0	0	0	24	7.20	24	7.20
Թեյի կամ սուրճի փոքր	հատ	0.225	0	0	0	0	0	0	24	5.40	24	5.40

բաժակներ												
						180.5		114.5		159.0		454.0

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
h/h **900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի**
գործառնական վարչություն
հվհհ ***02565827***

_______________ Վ. [illegible]

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<< Սեվ ընդ Էռ>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Նարեկացի 44
h/h ***16042054497700 <<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ԲԲԸ***
հվհհ 00881827

_______________ Ռ. Ալոյան

Հավելված N 3
<<23>> <<մարտի>> 2015թ. կնքված
N ՀՀ ՔՆ ԲՇԱՀ-ԱՊՁԲ-15/03 *ծածկագրով գնման պայմանագրի*

Վճարման ժամանակացույց

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Ապրանքի անվանումը՝ **Կենցաղային և հանրային սննդի նյութեր**

Ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	**4267**				180.5	180.5	180.5	295.0	295.0	295.0	454.0	454.0	454.0	**454.0**

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
h/h **900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի**
գործառնական վարչություն
հվհհ 02565827

Ա. Խաչատրյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<< Սեվ ընդ Էռ>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Նարեկացի 44
h/h ***1604205449770 0 <<ՎՏԲ Հայաստան Բանկ>>***
ՀՎՀՀ 00881827

Ա. Ալոյան

Հավելված 4
<<23>> <<մարտի >> 2015 թ. կնքված
Ն ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ-14/03 *ծածկագրով գնման պայմանագրի*

Կատարող

_____
_____
_____
_____

գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ_____
_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<մարտի>> 2015 թ.
Պայմանագրի համարը՝ **Ն ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ-15/03**
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության տնտեսական բաժնի պետ Ա. Տեր-Հարությունյանի և Կատարողը՝ ի դեմս << Սեվ ընդ Էռ>> ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Ալոյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն
_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն
_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.